



ՀԱՅԿԱԶՈՒՆ Ծ. ՎԱՐԴԱՊԵՏ ՆԱԶԱՐՅԱՆ

Ք Ա Ր Ո Ջ

«Յանուն Հօր և Որդոյ և Հոգւոյն Սրբոյ, ամէն»:

«Ձի Հիսուս Քրիստոս երէկ և այսօր նոյն և յաիտեան»:

«Որովհետև Հիսուս Քրիստոս ինչպէս երէկ էր, նոյնպէս այսօր ալ է, նոյնպէս հաւիտյան պիտի լինի»:

Ահա մի նախադասություն, որ ամբողջ քրիստոնեական հավատքն իր մէջ կապումնակէ և ամբողջ քրիստոնեական ապրելածը իր մէջ կիստացնէ, որովհետև այս նախադասությամբ կհայտարարե, թե մեր Տերը Հիսուս Քրիստոս է, Փրկիչ և Օծյալ է, փրկողն է այն բոլոր նրանց, որոնք պիտի հավատան իր անվան և իրեն բերած պատգամին, այլ նաև այն իրողությունը, թե Հիսուսի Քրիստոսի դեպքերը, պատմությունը իրականություն մըն է մարդկության ամբողջ աշխարհի պատմության մէջ, և ոչ թե հորինված է ինչ-որ ժամանակաշրջանի, ինչ-որ մարդկանց ձեռքով՝ հատուկ նպատակներով, այլ պատմական իրականության մասին է, որ կխոսիմք: Բայց պատմական շատ իրականություններ կան, և անոնց կպատկանին հնության, հնաբանության հետաքրքրություններին, իսկ Հիսուս Քրիստոս կենդանի է նաև այսօր

այն մարդկանց համար, որոնք հավատում են նրա բերած պատգամին, խոսում է նրանց կյանքի մասին, բայց նաև այն հավիտեանական իրականություն մըն է, որ նաև կլուսավորե մեր ապագան: Տակալին անցյալ շաբաթ էր, որ Ս. Հոգւո գալստյան տոնն է, որ կատարեցինք: Առաքյալներ, որոնք մեզ նման մարդիկ էին՝ ձկնորսներ, խեղճ ու համեստ մակարդակի եղած մարդիկ, որոնք ունեին մեր նոյն կարողությունները և տկարությունները, ո՛վ պիտի հետևեր դեկավարի մը, որ պիտի խաչվեր անարգ կերպով: Եվ պարզ է, որ խաչելության ժամանակ անոնք պետք է թողած և փախած լինեին: Բայց խաչելությունեն հետո ինչ-որ մի բան պատահեց: Ինչ-որ մի բան պատահեց, որ կերպարանափոխեց այդ վախկոտ հոգիներին, թույլ և տկար անձերին: Եվ դա հարության հաղթանակն էր մահու վրա, կյանքի հաղթանակը մահու վրա: Եվ այդ ընկալվեցալ բնականորեն առաքյալների կողմեն տարբեր էտապներով և շրջաններով: Ինչպէս կտեսնենք, հարության դեպքին ոմանք հավատացին, և ոմանք թերահավատացին, թե արդյոք եղածը ճշմարտություն էր, թե տեսիլք: Այնուհետև քառասուն օրերի ընթացքին Հի-

սուս ստեպ ստ ստեպ անոնց մոտեցալ, հանդիպեցալ և համոզեց նրանց հարության ճշմարտության և իրականության մասին: Եվ վերջապես անոնց հավատքի կնիք կդրվեր Ս. Հոգւոյ զայստոյան շնորհիւ: Կարծեք տակալին, հետևաբար, երեկ էր, որ առաքյալները՝ առաջին քրիստոնյաներ, ոտքի ելան Քրիստոսի հարության լույսով, կյանքը ապրելու, արդարության հասնելու հուշում կտարածեին քրիստոնեական պատգամը ողջ աշխարհով մեկ: Բոլոր այն տկար անձինք դարձեր էին մեկ-մեկ քաջեր, մեկ-մեկ այտյաններ բոլոր տեսակ թշնամությունների և տկարությունների, մարդիկ, որոնք իրենց անձը ազատելու համար փրկիւն էին, այժմ պատրաստ էին իրենց կյանքը զոհելու իրենց Տիրոջ և Փրկչին՝ Հիսուսի Քրիստոսի: Այդ նույն հավատքը, այդ նույն հավատքի սերմերը տարածվեցան նաև մեր աշխարհի վրա, այն սրբություն սրբոցի վրա, որ մենք կոչում ենք Հայաստան աշխարհ: Եվ մեր նախնիքը դարեր շարունակ հավատացին, հավատացին Քրիստոսի հարության, հաճախ խաչվեցին, հաճախ թաղվեցին, բայց չմեռան, այլ հարություն առին Քրիստոսի հետ միասին: Մեր կյանքը տառապալից է եղել, և գուցե նաև այսօր: Մեր պայքարը հոգեկան է, քան թե մարմնական: Մեր թշնամիները և խավար ուժերը ամեն տեսակ մարմնական նեղություններ և դժվարություններ կրնան հարուցանել մեր դեմ, առաջին անգամը չէ: Մեր նախնիքը Վարդանանցի օրերեն պատրաստ էին ուրանալու ամեն ինչ, որ աշխարհիկ է, բայց իրենց հոգին իրենցն էր և Տիրոջ կպատկաներ միայն: Եվ թշնամին գուցե կարողացաւ ամեն ինչ կործանել, ինչ որ նյութական էր, բայց հոգեկան ամրոցը տոկաց և դիմացալ: Եվ քանի որ դիմացալ, այդ նույն մեռյալ ժողովուրդը կրկին հարություն առաւ: Տակալին՝ երեկ, Եղեռնի օրերուն, մեր նախնիքը շատ հանգիստ կարող էին ապրել մի-յ պատմական հողերու վրա, թե ընդունեին մի այլ օրենք, մի այլ կրոնք և ուրանային իրենց իսկությունը: Սակայն նրանք գերադասեցին զոհել այն, ինչ որ մարմնական էր, քան թե ուրանալ այն, ինչ որ իրենց պիտի տաներ հավիտենականություն: Այսօր կրկին թշնամին մեզ այս փոքրիկ հողի վրա, այս մնացորդը, այն մնացորդաց մնացորդը ողջ պատմական Հայաստանեն, կնեղէ ամեն տեսակ դժվարություններով. տեղի՞ պիտի տանք արդո՞ք մենք դրան, պիտի լքե՞նք, հուսահատվե՞նք: Գուցե երբեմն կարող են պատահել այդ

դժվարությունների դիմաց մենք մի քիչ ընթացականք Աստուծոյ դեմ, արդարության դեմ, մարդկության արդարության դեմ: Սակայն այդ բոլորը մեզ պետք չէ շեղի մեր հիմնական նպատակից, որ է մնալ հայ և հայ քրիստոնյա: Թշնամու ուզածը գուցե հենց այդ է, որ մենք հոգեկան տկարանանք, թողնենք մեր այս երկիրը և իրենք զան և ապրեն, տիրանան այն բոլոր սրբություններին, որոնց համար մեր նախնիքը իրենց կյանքը տվին: Այսօր ուրախանալի երևույթ է տեսնել, թե ինչպես մեր ժողովուրդի փափագով վերազարթոնք է ապրում հոգևոր իմաստով մեր Հայաստան երկրի մեջ: Հոգևոր կյանքը արտահայտվում է նոր եկեղեցիների բացումով, բայց եկեղեցին տակալին նյութական շենքերն է, իսկական եկեղեցին դուք եք, սիրելի հավատացյալներ, որ կյանք պիտի տաք այդ եկեղեցիներու պատերուն, խրաններուն, գմբեթներուն, որոնց մեջ դարեր շարունակ մեր նախնիքը աղոթեցին, հավատացին այն օրվան, որ վերջապես պիտի գա հավիտենական հաղթանակը: Այսօր ձեր հերթն է: Մեր պատմությունը երկար է, սակայն նաև մենք որպես քաջ գիտակիցներ մեր պատմության, պետք է շարունակենք այդ պատմությունը, օղակները պետք է շարունակվեն ոսկյա պատմության, պետք չէ մոռանանք մեր անցյալը, որպեսզի մասնավորենք մեր ներկան և ապագան: Իմ աղոթքն է սու Աստված, որ կարողանանք դիմանալ այսօրվա մեր դժվարություններին և փորձություններին: Ժամանակը գուցե շատ փորձությամբ լեցուն է, բայց մեր պարտքն է, որպես հայ, եթե մենք հայ պիտի մնանք, պիտի պայքարենք, ինչպես Քրիստոս պայքարեց, չարիքի դեմ բարիով և ամեն մեր կայողություններով: Եվ համատեցեք արդարության հավիտենական հաղթանակին: Օրը պիտի գա: Օրը պիտի գա և մենք մեր բոլոր իրավունքներին պիտի կարողանանք տիրել: Բայց կարևորը դիմանալն է, հասնելն է այդ օրվան: Եվ սա Աստված, որ իսկապես մեր հաջորդները մեզ անեծք չեն կարողալ և մեր նախնիքը իրենց գերեզմանեն մեզ չեն նզովեր, որպես սզգադալեր, հայրենադալեր: Կըմաղթեմ, որ մենք արժանի զավակները լինենք՝ կոչվելու հայ ժողովուրդ և հայ քրիստոնյա ժողովուրդ:

Թող Ս. Հոգին մեր Տիրոջ կենդանարար մեզ ուժ և կարողություն տա դիմանալու համար այսօր և ապագային, ամեն: